

ՏԱՔԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳԻՐ

ՉԱՐՄԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

→ ՇԱՐԱԹ, 15 ՅՈՒՆՈՒԱՐ 1911 ←

ԹԻ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արարիչը՝ Տիեզերին մեջ (Բ.)	Բրոժ. Յակոբոս Հ. Ճէնիգեան
Ճրագալոյցի յուշեր	Բաբգէն Յպսկ.
Էլիզին հոգին	Տիրայր Վրդ.
Աստուծո՞ւ իմ	Սուրէն Վրդ. Գալէմեան
Հոգեւոյս Հայրապետի յիշատակին	Յ. Գ. Մամբրեան
Հայրապետական Գնահատութիւն	ՄԱՏԹԷՈՍ ԿԹՂ. ԻԶՄԻՐԼԵԱՆ
Կուսակցական գործունեութիւնը (Արձագանգ Բարիգէն)	Հայկասէր
Վաղամեծիկ պարմանիի մը յիշատակին	Տիկ. Հ. Արապեան
Ազգային կեանքը.—Մահ Մր. Հ. Մ. Այեհի.	Խմբագրութիւն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
 Զարմաքճըլար, Յակոբեան խան

Յոյսով ու վստահութեամբ լեցուն թեւակոխելու առթիւ Տաճարի երկրորդ տարեշրջանին մէջ, հարկ կը զգանք յայտարարելու թէ թերթը առ այժմ պիտի շարունակէ հրատարակուիլ նոյն ծաւալով (16 երես), հոգածու գտնուելով աւելի՛ խնամք տանելու պարունակութեան, որոշ նպատակով եւ ուղղութեամբ, որու համաձայն գրանուած յօդուածներ միայն պիտի կրնան հրատարակուիլ: Բաժնեգիրն նոյն կը մնայ գաւառի և արտասահմանի համար, իսկ Պոլսոյ տարեկան բաժնեգրին վրայ հինգ զԷ յաւելում մը միայն կ'ըլլայ, հաշուոց դիւրութեան համար, և այն նկատուածով մասնաւոր որ Պոլսոյ բաժանորդաց մեծ մասին թերթն ալ քօսդ-թօղալով կը ղրկուի: Հետեւապէս,

«Տաճար»ի տարեկան (52 թիւի համար) քաժանորդագրութեան պայմաններն են՝

Պոլսոյ և գաւառաց 40 դրշ.

Արտասահման 10 ֆր.

Ռուսիա 4 ռուպլի

Ամերիկա 2 տօլար

Այս պայմանները նոյն են՝ եկեղեցական թէ աշխարհական ընթերցողներու համար հաւասարապէս:

Տաճարի նիւթականը տակաւին ի վիճակի չէ մասնաւոր զեղչ մը ընելու կարօտ եկեղեցականներու և որսանողներու կամ վարժարաններու համար: Հետեւապէս կը հրաւիրենք բարեսէրները՝ այժմէն փութաւ ցընելու տարեկան Տաճարի նուիրատուութիւնները, Բ. շրջանի սկզբնաւորութենէն իսկ կատարելու համար առաքումները:

Ծանուցումներ կ'ընդունուին՝ չափաւոր և դիւրամատչելի պայմաններով:

Այն բոլոր բաժանորդներն և գործակալները որոնք դեռ Ա. տարեշրջանի հաշիւները փակած չեն մեզի հետ, կը խնդրուի որ շուտով կարգադրեն զայն: Բ. տարեշրջանի բաժնեգնոց ևս տարւոյն սկիզբէն վճարումը հարկեցուցիչ է, նիւթական դրութւարութեանց չմասնելու և աւելորդ թրջութեանց չհարկադրելու համար թերթին խմբագրութիւնը:

Տօնական օրերու զբաղմանց հետեւանօք, Տաճարի կարգ մը բաժանորդներու թերթերուն՝ անցեալ շաբթուան միացեալ 1—2 թիւը, և ներկայ Յրդ թիւը միասին կը ղրկուին, որուն համար ներդրութիւն կը խնդրենք:

ՈՍՏԱՆ, Եռամսեայ մեծ պարբերագիր, Արուեստներու, գրականութեանց և գիտութեանց, Հիմնադիր խմբագիրներ՝ Միքայէլ Շամտանճեան և Տիգրան Չէօկիւբեան: Մօտ 250 էջերէ բաղկացեալ ստուար հատոր մը, ուր ամբողջութեամբ կ'երևան Մօքասանի Պուշք Սիւիֆը, և Կ. Հաուրթմանի Արեւածագին Առաջը՝ ընկերային տուած հինգ արարուած, պատմուածքներ թոլսթոյէն, ուսումնասիրութիւններ քերթուածներ ևն. ծանօթ սիրուած գրողներէ: «Ուսանի իւրաքանչիւր թիւը պիտի ըլլայ Հայերուս և ընդհանուր ազգերու երեք ամսուան յառաջդիմութիւններուն պատմութիւնը»: Կը յանձնարարուի ամէն գրասէրներու, որ հիւթել և լուրջ ընթերցումներու սիրահար են: Իւրաքանչիւր թիւը կ'արժէ 12 դրշ.: Տարեկան 4 թիւի բաժնեգին 40 դրշ., Գաւառ 45 դրշ., Արտասահման 12 ֆր.:



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 15 ՅՈՒՆՈՒԱՐ 1911

ԹԻԻ 3

ԱՐԱՐԻՉԸ ՏԻԵԶԵՐՔԻՆ ՄԷՋ

Բ. (*)

Երբոր առաջին յօդուածս գրել ձեռնարկեցի, մտադրութիւնս էր մէկ յօդուածի մէջ ամփոփել բոլոր ըսելիքս: Բայց նիւթս այնքան ընդարձակ, այնքան շահեկան և այնքան հրապուրիչ է, որ կարելի չեղաւ ինձ բոլոր հարկ եղածը գրել այդ մէկ յօդուածով: Արդարեւ շատ ալ դժուար, ու մէկ քանի կէտերու մէջ անկարելի իսկ է ամէն բացատրութիւն տալ, առանց մէջ բերելու գրեթէ ամբողջ երկրաբանական գիտութիւնը: Ո՛չ թէ մէկ երկու յօդուած, այլ հատորներ գրել հարկ է, շատ ինքիւններ լուսարանելու ու շատ հարցումներու պատասխանելու համար: Կ'արժէ հատոր մը գրել այս նիւթին վրայ, կ'արժէ ամբողջ երկրաբանական գիտութիւնը ներկայացնել մեր ազգին, պարզ և ժողովրդական լեզուով մը:

Սակայն, առ այժմ շարաթական թերթի մը անձուկ էջերուն մէջ պէտք է ամփոփուինք. և այս իսկ պատճառաւ յիշենք միայն այն քանի մը աչքառու եղելութիւնները, որոնցմով կը հերքուին յարգոյ բը-

ժիշկ-յօդուածագրին տեսութիւնները՝ Ծըննդոց Գրքին և Արարչի մը գոյութեան մասին:

Ամէնէն առաջ սա ուշագրաւ իրողութիւնը պէտք է յիշենք թէ, Ծննդոց Գրքին Ա. գլուխը չգրուեցաւ Արարչութեան նկատմամբ գիտական տեղեկութիւն մը տալու, այլ միայն գեղեցիկ, պատկերային և արեւելեան լեզուով մը պատմելու Արարչութեան բոլոր հրաշալիքները՝ մաքրուած և զտուած հին աւանդութեանց առասպելաբանութիւններէն և հեթանոսական զաղափարներէն, մասնաւորաբար շեշտելով մեծ և յաւիտենական Արարիչի մը գոյութիւնը, սոսկական նիւթին անբաւականութիւնը՝ ասանկ հրաշալի, ներդաշնակաւոր տիեզերքի մը գոյութեան համար, ու անկէ վեր, անկէ առաջ եղող Յաւիտենական Աստուծոյ մը զօրութիւնը: Ի՜նչ ազդու եզանակաւ մը ի վեր կը բերէ Ծննդոց Գիրքը այս գերադոյն Զօրութիւնը, երբ իր վսեմ պարզութեան մէջ կը կրկնէ. «Եւ ասաց Աստուած». մեզի ցոյց կուտայ միանգամայն թէ արարչութեան գործը ո՛րչափ ալ գեղեցիկ և բարի եղած ըլլայ, անոր իրական արժանիքը իր մէջ չէ. արժանիքը հեղինակին սրտին և խորհուրդին մէջ է, որուն կը պարտի չափերը իր գոյութիւնը: Որ ատեն որ կանգ կ'առնենք արարչութեան մէջ, անկէ բաղած վայելքնիս հարեւանցի բան

(*) Ա. յօդուածը Տե՛ս «Տաճար», Ա. Տարի քիւ 361:

մին է միայն, և մենք մեր ապերախտութեան պատճառաւ, առաւել կամ նուազ կոչտ, բիրտ կռապաշտութեան մը ճամբուն մէջ ենք: Արարչութենէն մեր քաղած վայելքը այն ատեն միայն մաքուր և կատարեալ է, երբ մեր հոգին կը դպչի նոյն ինքն հեղինակին: Բնութեան ճշմարիտ նըպատակն է այս կապը շինել: Այս է նաև մարդուն կեանքին վախճանը: Տեսանելի տիեզերքին այս շլացուցիչ տեսարաններուն քօղին ետեւ, այս կոյր զօրութիւններուն ետեւ որոնք մերթ ընդ մերթ կը զարհուրեցնեն զմեզ, եղանակներու այս կանոնաւորութիւնով ու օրէնքներու այս անյեղլիութեան ետեւ, Ծննդոց Գրքին սա պարզ խօսքը՝ «Եւ ասաց Աստուած»՝ քօղը վար կ'առնէ և ցոյց կուտայ մեզ բազուկ մը զօրութեան, Աչք մը որ կը տեսնէ, սիրտ մը, բարութեամբ լի սիրտ մը որ զմեզ կը փնտռէ: Ան է որ հրամայեց որ սա լուսոյ ճառագայթը ծագի, որ երբ իմ աչքիս ցանցակերպին վրայ կ'իջնայ, կատարեալ ճշտութեամբ կը նկարէ այն փոքրիկ տեղւոյն վրայ դաշտավայր մը որ մղոններով տարածութիւն ունի: Ան է որ հրամայեց որ ինծի կեանք տայ սա մթնոլորտը զոր կը շնչեն թռքերս և որ կազմուած է երկու կազերէ որոնցմէ մէկը մահացու թոյն է ինծի համար: Ան է որ ոտքերուս տակ հաստատուն ըրած է սա գետինը որուն վրայ կը քալեմ, կ'աշխատիմ, կը շինեմ, կը անկեմ, և որուն ներքեւը՝ քիչ մը հեռուն՝ զարհուրելի կեղերական հնոց մը կ'եռայ: Ան է որ ցանեց սերմերը սա ծաղիկներուն և պտուղներուն զրոս ես կը ժողվեմ յաջորդաբար տարւոյն մեծ մասին մէջ, որոնք կը հրճուեցնեն զիս իրենց անուշահոտութեամբ, կը դիւթեն զիս իրենց համով կամ կը բուժեն զիս իրենց հիւթերով: Ան է որ չընկալաւ զիս սա այլեւայլ արարածներով որոնք կը յիշեցնեն երկինքը ու երկիրը, ծովն ու ցամաքը: Եւ եթէ վերջապէս ես հոս եմ իբր այս արարչութեան գլուխ գործոցը, կարող անկէ գատ կենալու խորհուրդով, պատուելու համար երկրպագութեամբ՝ այս քօղը որ զիս ամէն կողմէն կը չընկալատէ, և

թափանցելու մինչեւ այն սրտին որ ինձ համար կը բաբախէ, եթէ կրնամ «հայր» անունով ողջունել Ան որ իմ գլխուս 140,000 մազերը կը համրէ, ինչպէս կը համրէ այն աստղերուն միլիոնները որոնք իրենց շրջանը կը կատարեն անհուն անշըրպետին մէջ, եթէ կարող եմ ընել զայս, անոր համար կարող եմ, որովհետեւ Ան ուղեց զիս իր պատկերին պէս շինել, և դնել իմ մէջս ճառագայթ մը բուն իսկ իր հոգիէն:

ԱՍՏՈՒԱԾ ԱՍՍՏ.—Այս խօսքերուն մէջ կայ մեր սրտին, նաև մեր մտքին համար ամէն բանին ճշմարիտ արժէքը, ինչպէս նաև մեր գոյութեան ճշմարիտ արժէքը. և այս խօսքերը կը գտնուին Ծննդոց Գրքին այն գլխուն մէջ զոր ցաւօք կը տեսնենք թէ անգիտաբար կ'արհամարհէ ու կը ծաղրէ իսկ մեր յօգուածագիր Պր. Բժիշկը:

Մովսիսական պատմութեան մէջ ուրիշ գլխաւոր և ուշագրաւ պարագայ մըն ալ կայ զոր պէտք է մէջ բերել. հոն այդ արձանագրութեան մէջ որոշակի կ'երևի յառաջդիմութեան այն մեծ օրհնիլ զոր յայտնապէս ցոյց կուտայ մեզ՝ երկրաբանական գիտութիւնը: Միջին դարերու վերջերն էր երբ առաջին անգամ մարդիկ սկսան հետաքրքրուիլ գիտնալու, թէ ինչ նշանակութիւն ունէին այն ծովային խեցիները զորս կը գտնէին լեռնային բարձրութեանց վրայ. ու ժամանակին գիտունները շատ այլազան ենթադրութիւններ կ'ընէին այդ նիւթին վրայ. ոմանք կ'ըսէին թէ բնութեան քմահաճոյքը կամ խաղերն են անոնք, ոմանք անոնց մէջ կը տեսնէին աստղերուն ցոլացումները կամ անդրադարձութիւնները, այլք ջրհեղեղի հետքերը տեսնել կը կարծէին անոնց մէջ. ուրիշներ ալ կ'ըսէին թէ արարչական զօրութեան անկատար ջանքեր էին անոնք: Այն գաղափարը թէ մարդուն ստեղծումէն առաջ կար արարչութիւն՝ որ աստիճանաբար յառաջացած էր մինչեւ որ բնութեան պակը՝ մարդը առաջ եկաւ, մէկուն մտքէն չէր անցնիր տակաւին այդ ատենները: Եւ սակայն զարմանալիքը հոն է որ այդ կեր-

րարանական մեծահրաշ եղելութիւնը, ետ-
քէն աւելի յայտնուած եւ ի տես եկած
երկրաբանական գիտութեան միջոցով՝ որով
կը պարծի այժմ մեր երկրաբան յօդուա-
ծագիրը շարաթական Ազատամարտի էջերուն
մէջ, երեք հազար տարի առաջ արդէն
Մովսէս պատմած էր իր վսեմ էջերուն
մէջ. ու այդ պատմութեան մէջ յառաջ-
դիմական օրէնքին նկարագրութիւնները
իրենց ընդհանուր գիծերուն մէջ ճշտիւ կը
համապատասխանեն հազարաւոր տարի-
ներ վերջ երեւան եկած գիտութեան յայտ-
նած եղելութեանց: Հետաքրքրաշարժ և
օգտակար պիտի ըլլայ այն գլխաւոր հա-
մաձայնութեանց մէկ քանի հասը գէթ
հոս մէջ բերել, թէպէտ հարկադրուած ենք
անշուշտ հակիրճ կերպով խօսիլ և մեր
բացատրութիւնները սահմանափակել անոնց
քանի մը գլխաւորներուն միայն:

ՅԱԿՈԲՈՍ Զ. ՃԵՃԻՋԵԱՆ

(Ծարունակելի)

Ի Լ Ի Ջ Ի Ն Հ Ո Պ Ի Ն

Այգուն մարգի՛ն մեջ անմէկ զուարթեան,
Եպիքոսակուած արշալոյսի թափեան,
Ծաղիկները հազիւ թէ նո՛ր են զարեւր,
Ի՛նչքան մոգեմ հոգիս դաշտի այդ զարդեր:

Յափուկներու, շուշաններու սուրբեր՝
Թուփ մը գողտիկ թիւր նազանքով եր ծըլեր.
Վարդ մը կարմիր սաղարթներուն մէջ թացուած,
Թարմութեան մէջ նըմարեցի յոյժ սխաւած:

Լեզու չունեիր, գոյնն ամեն բան կը մասնէր,
Կը վախճայիս անոր դրպչի իմ մասնէր:
Ըսին.—«Էլի՛ց հոգի մըն եր թիւեռնիկ,
Թընած ասեմ արմատ առած եր մենիկ.

Եւ իր ցաւէն փրթեցուցած վարդ մը շառ,
Որ մօր սրտին արիւն-վիշոյր կ'երգէր յար:»
Ու դեռ ի՛նչ բարձր բարձր կեանք կան մեկնած
վաղ,
Որոնք անհուն վերք կը բողոքէ, ո՛հ, աւա՛ղ:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՅՈՒՇՔԵՐ

Առջի երեկոյին Ճրագալոյցն էր Ս.
Ծննդեան: Ես շատ կը սիրեմ այդ օրը և
այդ օրուան երեկոյն մանաւանդ: Կը յի-
շեմ մանկութեանս օրերը, մեր Այնթապի
հին եկեղեցին, ուրկէ չէի ելլեր գրեթէ
մեծ օրերուն: Բայց մանկութեան օրեր
անցան գնացին, ա՛լ դառնալու չեն, բա-
նաստեղծի ըսածին պէս:

Եւ սակայն սա՛ պատիկները, որոնք
Ճրագալոյցին, կէսօրէն ետքը Եկեղեցւոյ
բակը անհանգիստ կ'ըլլան, կը նորոգեն
մանկութեանս օրերը: Ասոնք օրերէ ի վեր
պատրաստուած են զիրի կարգալու, և հի-
մայ ներքին վրդովումով մը ժամանակէն
շատ առաջ եկած են Եկեղեցի՝ իրենց գա-
լարուն թուղթերով, Գիրքի ընթերցուած-
ներ: Պիտի յաջողի՞ն արդեօք: Ամբողջ աշ-
խարհ մը կը խլրտի հիմայ այդ փոքրիկ
մարմիններուն մէջ: Բակին մէջ ձայները կը
շատնան, ամէնքը կը խօսին, ոմանք իրենց
գիրքերը կը սերտեն. վերջապէս կը հնչէ
Ճրագալոյցի զանգակը, սովորականէն շատ
առաջ, և ներս կը խուժեն անոնք: Հիմայ
աղմուկը փոխադրուած է դասերու մէջ,
ատենանը, վերջը խորանի վրայ՝ վարա-
գուրին ետեւ: Նոյն պատիկները, նոյն
տենդով, նոյն անհանգստութեամբ կը փըս-
փըսան, կը խօսին, կ'աղմկեն: — Ինչո՞ւ.
որովհետեւ գիրք պիտի կարդան:

Ես որ ծննդաւայրիս Ճրագալոյցներէն
ետքը տեսայ Դպրեվանքի, Պէշիկթաշի,
Սամսոնի, Մշոյ, Բերայի, Ղալաթիոյ,
դարձեալ Դպրեվանքի, Գրք-Շէհրի և այս
անգամ ալ Անկիւրիոյ Ճրագալոյցները,
այս զանազան տեղեր՝ սանկ ըսան տարի-
ներու երկարութեան մը վրայ հանգրուան-
ներ կը գծեն, կեանքիս հանգրուանները,
որոնք իրարու չեն նմանիր. անոնց հորձ-
ուանքը, անոնց տառապանքը, անոնց ինք-
նամփոփումը, անոնց աշխատանքը, անոնց
ամէն բանը տարրեր են իրարմէ: Եւ սա-
կայն ատոնք միակ պատկեր մը կը կազմեն,
որ մէկ նայուածքի տակ կը պարզուի,
կ'ըմբռնուի, կը վերլուծուի, իբր թէ տա-

րիններ անջրպետած չըլլային իրարմէ կեանքիս այդ հանգրուանները :

Այս պատկերին մէջ կարծես թէ միակ անփոփոխ ու անալլայլ կողմը սա՛ մանկութիւնն է, մշտակենդանի գեղեցկութիւն տարիքի և նկարագրի, սա՛ Գիրք կարգացող մանկութիւնը Ճրագալոյցերուն, — ո՛չ, սխալեցայ, պէտք է ըսէի Ճրագալոյցին . որովհետեւ այն ալ մանկութեան պէս անփոփոխ ու անալլայլ է, մանկութեան ժամը, մանկութեան եկեղեցին :

Խիստ մեծ կարեւորութեամբ դիտեցէք սա պատկերը, խորանի վրայ՝ վարագոյրի առջեւ շարուած պզտիկներու սա պատկերը : Անուշ անուշ պլլալացող մոմերու շարք մը՝ ձեռքերու մէջ բռնած գալարուն թուղթերու հետ : Շապիկները խորհրդաւոր պատմութեան մը պէս ազատ զինուորութեան մը համազգեստով զարդարած ու պաճուճած են զանոնք : Աչքերը սեւեւ ուսած են դէպի ժողովրդին կայքը և վերնատունը, ուր իրենց համար հետաքրքիր մը կայ անշուշտ, հայր մը, եղբայր մը, քոյր մը, ծանօթ մը և մա՛յր մը մանաւանդ, որոնք իրենց փոքրիկին յաղթանակը պիտի տօնեն անմիջապէս, սրտի փոխադարձ տրոփումներէ ետքը :

Ես հազիւ թէ վարը լմնցուցած եմ ստեղծագործութեան երկա՛ր ընթերցուածը, որ Դրախտի դրան հետ հրեշտակային և բոցեղէն սուրի պահպանութեամբ կը փակուի, վերէն ծայր կուտան «ընթերցողածա» ներու ոլորումներն ու գալարումները : Ա՛լ դիտէ փոքրիկ ընթերցողներուն կեցուածքը, նայուածքը, շարժուածքը, յաւակնութիւնը, պարծանքը, վարանումը, համարձակութիւնը, իրենց այդ դիրքի հոգեբանական բովանդակ արտայայտութիւնը : Մէկը շատ բարձրէն կ'առնէ, և հազիւ քանի մը տուն կարդացած է, կը սկսի նեղուիլ, կը կարմրի, կը խղճուի . կոկորդին և քունքերուն երակները կ'ուռնին, աչքերը կը ցլան, վերջապէս կը ստիպուի ձայնաստիճանը փոխել : Միւսը վստահութեամբ կը սկսի, փոքրիկ հազ մը, և ալ կը շարունակէ ոլորել տնավերջերը՝ բերնի այնպիսի ծամածուծութիւններով, գլխու այնպիսի շար-

ժումներով, որ բոլորովին բնական են իրեն : Սա՛, արագ արագ կը թոթովէ բառերը, Իմաստունէն կտոր մըն է կարդացածը գլխու, աչքի շարժումով կը հետապնդէ տողերը այս ու այն կողմ . ա՛ն՝ անհամբեր կը սպասէ իր կարգին և այնպիսի կեցուածք մը ունի, որ կարծես ըսել կ'ուզէ . — Ես այնքան լաւ պիտի կարդամ որ իմ Գիրքս . . . : Վերջապէս կարգը կուգայ Դանիէլի գիրքին : Նաքուզողոնոսորը՝ թագաւորական վեհութիւն մը կուտայ իր շէշտին : Երեք մանկունքը՝ իրարու նայելով «Ոչինչ է պիտոյ»ն կ'երգեն : Հրեշտակը կամ Ագարիսն կ'ամբողջայնեն Բարեկոնեան հնոցին պատկերը, որ երբայական գրականութեան ամէնէն կորովի և ամէնէն վեհափառ հատուածներէն է :

Փոքրիկ ընթերցողներ, — և եթէ կ'ուզէք՝ սրբազան փոքրիկ դերասաններ, — կարծես կը զգան իրենց դերին ու դիրքին նշանակութիւնը, և կը տարուին իրենց բոլոր էութեամբ ընթերցուածի երկա՛ր հոսանքէն :

Շատ ուշադրաւ է անոնց վերաբերումը իրենց գալարուած թուղթերուն հետ : Ո՛ր գիտէ ի՞նչքան ժամանակ նուիրեր են ատոնց ընթերցանութեան : Իրենց ամէնէն գեղեցիկ գիրերը ճարտարած են Գիրք գրելու համար : Սև, մանիշակ, կարմիր թանաքներ, զարդագիրներ, գլխագիրներ . հապա սա՛ ճակատներու զարդարանք . այլաճեւ ու սյլազան խաչեր նկարած են ոմանք իրենց Գիրքին ճակատը . անոնցմէ մէկն ալ Ս . Մանդեան շատ սիրուն ջրաներկ պատկեր (քարդ-փօսդալ) մը փակցուցած էր իր թուղթին ճակատը : Այս չէ բոլորը : Երկար թուղթ ունեցողներ աւելի մեծ հպարտութիւն մը կը զգան, և անանկ ձեւով մը կ'արձակեն գալարուածքը, որ թուղթը իր նեղ ու բարակ հասակը կ'երթայ կը փռէ իր ոտքերուն վրայ, և քանի՜ առաջ կը տանի ընթերցումը, թուղթը կը սկսի դէպի առաջ հանդարտօրէն երկարիլ, բացուիլ, պարզուիլ :

Ընթերցուածը աւարտողներ, ոմանք ծիծաղուն, ոմանք ամէկոտ, ոմանք խեղկատակ անգիտակցաբար, գլուխ

կը խոնարհեցնեն ժողովուրդին, կը գալարեն իրենց թուղթերը, կ'անցընեն մոմը և վար կ'իջնեն մէկիկ մէկիկ՝ ամբողջ ալ ընելու իրենց խոնարհութիւնը, և գոհունակութեամբ մը կը համբուրեն Սրբազանին Սջը: Ա՛լ վերջացած է դերը. հիմայ նստած են ատենանի մէջ. կը մնայ հետաքրքրութիւնը. ե՞ս լաւ կարգացի, թէ դու: Ետքը պիտի գայ տան գնահատումը. տեսնենք ի՞նչ պիտի ըսեն հայրիկը, մայրիկը:

Ես ո՛չ միայն շատ սիրուն, այլ նաև շատ խորհրդաւոր կը գտնեմ այս պատկերը Ճրագալոյցին: Հայու ժամուն խունկին հոտը, մոմին լոյսը՝ այս փոքրիկները կը հրեշտակացնեն: Անոնց վրայ բան մը կը տեսնես, բան մը կը զգաս, որ Հայու երկիւղածութեան, Հայու հաւատքին արտայայտութիւնն է:

Ինչպիսի կենսական պէտք մըն է Ճրագալոյցի այս հրեշտակներուն կրթութիւնն ու դաստիարակութիւնը Հայու ըմբռնումով: Ձէ՛ որ ասոնք վաղը գործուն սերունդը պիտի ըլլան: Ձէ՛ որ ասոնք կեանքի աւետիսը պիտի հնչեցնեն գործի աշխարհին մէջ, ընկերական մեծատարած կեանքին մէջ:

Եւ երբ այս փոքրիկները, նորէն վերը խմբուելով — տեղական սովորութիւն — սկսան երեք մանուկներու օրհներգութիւնը նուագել և խորանի երկու կողմնակի սանդուխներէն վար իջնել բոլորած և, միտքս թռաւ Բեթղեհէմի գիշերուն աւետարանական պատկերին մէջ խորատու զուելու, ուր հրեշտակներ ելեւէջ կ'ընեն Աստուծոյ փառաց ճառագայթումներուն մէջ, և խելճուկ հովիւները կը ցնծան այդ հրաշափառ տեսիլներու լուսափայլումին մէջ:

Արդեօք այդ հրեշտակներն ալ այս պատկերներու պատկերները չէ՞ին, որոնք Ճրագալոյցի երեկոյն կը միացնեն Ս. Թընունդի փառքերուն:

Անկիւրիա
1911 Յունվ. 7

ԲԱՐՅԷՆ ԵՊԻՍԿ.

ԱՍՏՈՒԱԾ ԻՄ ...

Մանկական անմեղ շրթունքներս նախ քու անունդ թոթովեցին. — Աստուած: Հաւատքի մարմնացումը հանդիսացող մայրս, իր կաթին ու սիրոյն հետ, մատաղ մտքիս մէջ թխսաւորեց ու սորվեցուց ինձ քու մեծվայելչութիւնդ երկնային, փառքի գերագոյն զօրութիւնդ աննկուն և մեծութիւնդ անսահման:

Ո՛հ, Աստուած իմ, մանկական անմեղ ու անբիծ, անոյշ ու մեղանոյշ, փափուկ ու սիրուն հասակէս սկսեալ խորապէս ներգործուած է իմ ամբողջ էութիւնս Անուշիդ առինքնող հմայքէն, անհամար ստորագելիքներուդ թովանքէն և քու անհասանելի կամքիդ ամենազօրութեանէն, ներգործուած այնքան, որ վերայեցողութեանս ինքնամոռաց վայրկեաններուն մէջ Քեզ միայն կ'երեւակայեմ, ներքնայեցողութիւններուս ժամանակ Քեզ միայն կը տեսնեմ, կեանքի դառն ու քաղցր, բախտաւոր ու անբախտ օրերուս մէջ Քեզ միայն կ'երագեմ, և սէրերուս ու յոյսերուս մէջէն Քեզ կ'ընդնշմարեմ շարունակ:

Հակառակ սակայն այսքան ներգործումին, և Անհունութեանդ հանդէպ անկեղծ պաշտելութեանս, ինչո՞ւ այսքան դժուրակ կեանք, Աստուած իմ, ի՞նչ է մանկութենէս սկսեալ սա անողոր բախտիս անդադրում հետապնդումը: Ի՞նչ պատճառաւ իմ մէջս և ինչ դուրս գտնուած բոլոր ոյժերը ընդակամբ կը նային ինձի: Մինչեւ ե՛րբ այս վիշտն ու արցունքը, ողբն ու կոծը, հոգն ու սուգը, Աստուած իմ:

Աստուած իմ, սկիզբն ի վեր Քեզմով հմայուած էութիւնս իր ամբողջութեամբ քու զօրութեանդ արտայայտման տրամադրեցի. իմ կարողութեանս ամբողջ թափովը երկինքի հետ քու փառքդ պատմեցի. իմ փանաքի ոյժերովս անսահման կարողութիւնդ սահմանել ջանացի, իմ հունաւոր մտայնութեամբս գոյութիւնդ հաստատելու նկրտեցայ. իմ տկար լեզուովս «Ի սկզբանէ էր բանն... և Աստուած էր Բանն» յաւիտենական ճշմարտութեան,

ուրիշներ ընտանեցնելու աշխատեցայ : Ձեռակերտիդ , չքնաղ Բնութեան բոլոր տեսանելի և անտեսանելի երեւոյթներուն մէջէն պատկերդ ընդնշմարեցի : Բայց ի՞նչ դժբախտութիւն , բնութենէն անժառանգ մնացի , Աստուած իմ :

Աստուած իմ . խողտացող ծածանուտ ծովուն ծփանուտ մեղեդիներուն հետ , էութեանս խորերէն արտաբերուած աստուածավախ զգացումներու լաւագոյններէն Անմահիդ նուիրուած սրտառուչ մեղեդիներ հիւսեցի : Մեծ Կամքէդ բղխած դարաւոր պատգամները զգացումներուս արագաթուիչ թեւերուն վրայ վերամբարձ , իբրեւ համեստ պատգամատար , քարացած ու ամայացած սիրտերուն տարի . . . : Ամենակարողութեանդ առջեւ կափ ու փակ աչքերս երկնակամարը գեղազարդող բլուր , անհամար լուսաւորներուն յառած , անոնցմէ յոյսի և լոյսի , սիրոյ և գեղոյ շիթեր ծծեցի , և անոնցմով ցօղել ու շիթել ուղեցի իմ նմաններս : Անմահութիւնը , որուն ապացոյց և յարացոյց նկատած եմ արեւգալն ու լուսինը , և վարը սա մշտադաւար ուռնիներն ու նոճիները երկնաւայ , երգեցի թռչնոց մեկանոյդ դալալիկներուն հետ . և յամբ բաբախող սրտէս թռած երգերն ու մեղեդիները խառնեցի անոնց դալալուներուն հետ , և ուղեցի որ գեղգեղուն անոնք , որքան որ ծագին ու մարին երկնային լուսաւորները , և որքան որ ծլին ու ծաղկին , դալարանան ու չորան ուռնիներն և նոճիները : Բայց ի՞նչ հոգ ու վիշտ , Աստուած իմ , թառամեցաւ կեանքիս ծաղիկը , թօթափեցաւ էութեանս խոտը , անարախ միաց սիրտս , ժայռացաւ խիղճս , եթերացաւ միտքս , կարկամեցաւ լիզուս և ընդարմացան զգացումներս , որովհետեւ ներքնադուրս ալ հաւառակեցան ինձ , Աստուած իմ :

Աստուած իմ , պահ մը թողուցի որ հոգիս յուզուի երկինքէն , կապոյտին թովանքներէն , սիրտս յափշտակուի արփիին ոսկեղող ճաճանչներէն , միտքս զերթ արագաթուիչ արծիւ սուլառնի անհունին ցլուքերուն մէջ , վայրկենապէս արտաբերուած բնութեան դաշն ու մեկնոյշ մեղեդիներէն ,

և էութիւնս համակ տքնի ու ճգնի անոնց մէջ գտնելու համար ստեղծագործող ոյժ մը : Ո՛հ , կը խոստովանիմ որ սափկա մտային ու բարոյական ոյժերուս արտակերտացում մըն էր : Ու դարձեալ սա հասարակաց ըմբռնողութեան եկայ թէ Դուն ես ոյժերուն գերագոյնը , ստեղծագործողներուն ստեղծագործը , թագաւորներուն թագաւորը և տերանց տէրը : Այս ըմբռնացումը տարբեր բան մըն էր , այո՛ , բայց սանձահարեցի և դարձեալ խոնարհեցայ անճառելոյդ մեծ Սեղանին առջեւ : Բայց այդ սրբող սեղանը — «Սեղանն որ սրբէ զոսկին» , չկրցաւ «անօթ ընտրեալ» մը ըլլալու աստիճան սրբել ու զտել զիս , Աստուած իմ :

Աստուած իմ . կեանքիս մէջ չա՛տ օրեր , ժամեր ու վայրկեաններ՝ դառնութիւններուս և վիշտերուս մոռացման համար , Սաչիդ առջեւ ծնրադիր , ինքնամոռացումներունցայ , աղի արցունքներս թարգման հանդիսացուցի վրդովեալ էութեանս : Հոն լերան քարոզիդ «երանի»ները կըրկնեցի , «վայ»երը արտասանեցի և վերջին կտակիդ «մի՛ խռովեցին սիրտք ձեր» խօսքերուդ վրայ մտածեցի ընդ երկար : Բայց խորհրդածիլ Սաչդ , որուն տեսքը ձիւնի պէս կը հալեցնէ քարացած սիրտերը , չփշրեց զիս չըջապատող դժբախտութեանս խոչընդոտները , չփարատեց տարակոյսի և յուսահատութեան թանձրացած մշուշը : Ս՛հ , Սաչին վրայ ողջակիզուած մարմնոյդ ճենճերումին հոտը կ'ուզէի ես , Աստուած իմ , փրկարար արիւնիդ կաթիլներէն կաթիլի մը կարօտ էի ես , Աստուած իմ , «երանի»ներուդ մասնակից , «վայ»երուդ վայակից , և վերջին կտակիդ կտակակից կը փափաքէի ըլլալ : Եւ սակայն ասոնց ամէնէն զուրկ մնացի , Աստուած իմ :

Աստուած իմ , ա՛յդ երկար ինքնամոռացումներուս , պաշտելութեանս , մանուկ հասակէս սկսեալ Անմահիդ հանդէպ ունեցած հիացումիս հակառակ , կրած դժբախտութիւններուս պատճառը իմ անձիս մէջ ուղեցի փնտռել . . . փնտռեցի ու գըտայ . . . Աստուած իմ մեղայ . Բեզի հանդէպ ունեցած նուիրումիս մէջ թերի , հա-

ւատքիս մէջ թերի, և պաշտելութեանս մէջ թերի գտնուած եմ... Ահաւոր սխալ, զոր դարմանելու համար, կատարեալ անձնութիւնութեամբ, հոգիով ու մարմնով Մեծ Վայելչութեանդ և Մեծ Դատիդ նուիրուեցայ և նուիրումի սեւ շղարշը գլխիս, ահա, Պապիդ առջեւ խոնարհած ու ծնրադիր կը պալատիմ, Տէր, մեղայ, ներէ մեղաւորիս և քաւէ անօրէնութիւնս, Աստուած իմ...:

ՍՈՒՐԵՆ ՎՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

Սկիւտար

ՀՈԳԵԼՈՅՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սկիւտարի Յառաջդիմական Միութիւնը՝ Ամենայն Հայոց հոգեւոյն Հայրապետին ի յիշատակ սգահանդէս մը կազմակերպած էր, որուն մէջ Տ. Գրիգորիս ի. Վ. Պալազեան ծանօթ տխուր յայտնութիւններն ըրած էր՝ երջանկայիշատակ Կաթողիկոսին էջմիածնի մէջ անցընել հարկադրուած կեանքին վրայ: Այդ սգունդէսին բացումը կատարեց ներհուն պատմաբան-գրագէտ Յ. Մրմըրեան էֆ. հետեւեալ բանախօսութեամբ, զոր մասնաւոր հաճոյքով կը ներկայացնենք Տաճարի ընթերցողներուն:—

ԱԶՆԻԻ ՍԿԻԻՏԱՐՑԻՔ

Օրհնեալ յիշատակին հանգուցեալ առաքինի և օծեալ Հայրապետին Բրիստոնէական Եկեղեցւոյ և ամենայն Հայոց պատրաստելով տխրապէս գեղեցիկ այս սգահանդէսը, պատուական անդամք Սկիւտարի Յառաջդիմական Միութեան զիս արժանի դրին՝ յարգանքով մը վեր իմ արժանիքէն՝ անոր փղձկուն բացումը կատարելու: Ծնորդակալութեամբ և օրհնութեամբ իր յիշատակին՝ կ'ընդունիմ այս տխուր պատիւը, չնորհակալութեամբ մանաւանդ հանդէպ հանգուցեալին ոգիին, որ այնքան կը սիրէր այս մեր իմացական ու խաղաղական գիւղաքաղաքն, և որ այնքան յիշատակներ ձգած է հոս՝ սիրտի՝ միտքի՝ և կրօնքի՝ քսան և հինգ տարուան բնակութեամբն և անդեամբն հոս, մանաւանդ անձնապէս իմ մանկութեանս ալ հանդէպ⁽¹⁾:

(1) Գիր գրելու առաջին քուղբն՝ հիւնգ օստեկան հասակիս Ս. Հայրապետին մեռիկն առած

Ո՛վ Սկիւտարցիք, հանգուցեալ Հայրապետն իր սրտեռանդն գործունէութեանց և տարազնացութեանց մէջ՝ կը տածէր միշտ սեպական գորով մը սուրբ այս հինաւուրց բազմահայ քաղաքին վրայ, ու ամէն առիթով կը յեղեղէր զայն:

Արդարեւ փոքր ինչ ալ չէ՝ այս համեստ քաղաքին հին ու նոր՝ մանաւանդ իմացական՝ փառքը, որով ջահած է Վոսփորի և բուն մայրաքաղաքին հայ միտքերուն, իր ակադեմիկ բարձրութիւններէն: Իմացական այս նախամասնութիւնը մեր բնաքաղաքին՝ բաւական հին և ամուր է. երեք հարիւր տարիէ աւելի՝ մինչ Ս. Մեսրոպեան Տարօնի մեծ գաղթականութիւնը հաստատուելով մեր Եէնիմահալլէի թաղն և ապա Երուսաղէմի անուանի հոգեւունքն, որ հոն կառուցաւ, ապա ուրիմն դարձեալ խաչանուն բարեպաշտ և իմաստասէր այս թաղն ալ կցորդուելով անոր 1800ի մօտերն՝ իր առաքինի եկեղեցականներով և հոգակաւոր տիրացու վարժապետներով, ամիրաներով և արհեստաւորներով, ինչպէս 1838ին մեծ ձեմարանը, որուն յառաջդիմութիւնն հայկական՝ դեռ ոչ մէկ Պոլիսի հայ դպրոց կամ մասնաւոր վարժարան ի հանդէս բերաւ, այս ամէնն և ա՛յլ շատ յիշատակներ՝ Սկիւտարն հոմանիշ ըրին Կ. Պոլսական դեհերուն համար հայ լեզուի, կրօնի, ձայնի, արհեստական ճարտարութեան, իմաստութեան ու նահապետավար մեծութեան:

Հին այս որրանէն ելած են նաև մեծ մարդիկ, մե՛ծ ու բա՛րձր իրենց ժամանակի միջակ մակարդակէն, ինչպէս նաև գէթ իմացական ու կրօնական անդեամբ ելած ու աճած է հանգուցեալ առաքինի հայրապետն ամենայն Հայոց: Տ. Գրիգորիս Ծ. վարդապետն Պալաքեան՝ հանգուցեալ ին պատուիրակ մտերիմն ի Ս. էջմիածին՝ կը վկայէ թէ վերջին ժամանակներս ինքն իսկ Վահագաւոր կը յեղեղէ եղեր՝ որ իր

եմ յՕրթագիւղ Ս. Թարգմանչաց դպրոցը, մինչ ինչ Սիմոն վարժապետ կ'ըսուէր հոն, որ եւ շեշեց ինծի նոյն պահուն. «Ա՛ն տղաս, քեզի քուղբ կուսաւ որ գրես, ադէ՛կ գրէ»: Անի ցայսօր ադէկ գեշ կը գրեմ անդու...:

ծնունդը Կ. Պոլիս Դուռ-դարու և անունը (անշուշտ սիրտի՝ և հոգիի՝ անունը) երջանիկ Սկիւտարն եղած է: Ես Սկիւտար անած եմ՝ ըսած է:

Իրո՞ւ վ ալ օրհնեալ ոսկեա՛յ այս հինաւորը Խրիստոպոլիսէն ելած են՝ անունդով և ծնունդով ալ՝ վաղեմի (1600ի) Զաքարիա Պատրիարքը, Տէր Աբրահաման Տէր Յովհաննէս ձայնագէտ մեծ տիրացու վարժապետն՝ իր ցայսօր մեծ յաջորդներովը, Շղթայակիր Գրիգոր և Կոլոտ Յովհաննէս Բաղիշեցի իմաստուն և առաքինի պատրիարքները, Նալեան Յակոբ Պատրիարքը, Սերոբեան Յակոբոս բարի Պատրիարքը, Նշանաւոր ուսեալ քահանաներ, Պալեան Մինաս, որդին Գրիգոր, որդին Կարապետ, քաջարուեստ որդին սահմանադիր Նիկողայոս Պալեան ճարտարապետներն՝ իրենց կցորդ մեծ արհեստապետներով, որ փառքն հիւսեցին Օսմանեան ընդի ճարտարապետութեան, Ղազէղ Յարութիւն յաճախ բնակութեամբն հոս, Օտեանք՝ մանաւանդ իմաստասէր Գրիգոր էֆ. Օտեան, Խրիմեան Հայրիկ, Յովհաննէս Պրուսացի Տէրոյենց, մեծ նկարիչներն Ումետ Պէհաւտ և Աբրահամ Սադական էֆ., Խ. Պ. Միսաքեան, Մարտիրոս Թոքաթեան հեղ վաճառականը, Ստեփան փաշայ Արսլանեան, Բարունակ պէյ Ֆէրուհիսան, բոլոր մեծ ճեմարանականք, որ բովանդակ Կ. Պոլիսի մտաւորական և արուեստական մեծ նախկին շարժումին ռահվիրաններ եղան, Ռ. Յ. Պէրպէրեան, Խաչիկ Ուղուրիկեան, Պետրոս Դուրեան և ուրիշ նոյն կարգի շատ հանգուցեալներ՝ կենդանի անհանգիստները զանց ընելով՝ որ պիտի յարուցանին իրենց օրինակովն ու յիշատակով թերեւս աւելի գերազանցիկներ, թէպէտ 15—20 տարի է մեր Սկիւտարն ինկած նուազած կը տեսնենք ցաւօք:

Ըստ այսմ՝ առաւօտեան Մայր Եկեղեցւոյ Հոգեհանգստեան Պատրիարքական սքանչելասուգ քարոզէն ետք ի Դուռ-դարու՝ որդիաբա՛ր նաև քաղաքակցական ու իմացական սգաւորութեամբ՝ մեզի՝ հին ու նոր Սկիւտարացւոցս ալ կը վայելէր պատշաճ սեւով մը սգերգել իր յիշատակը:

Բացման այս տխրականիս մէջ՝ ես ոչինչ պիտի խօսիմ իր կեանքին ու նկարագիրին վրայ. օրագիրները խօսեցան բաւականապէս ըստ իրենց ոմին, և մեր Տ. Գրիգորիս Պալաքեան վարդապետն ալ՝ մօտէն տեղեակ մանաւանդ իր վերջին ամբարուն՝ պիտի խօսի հիմայ Զեզի ինչ որ գիտէ ականատեսն ու ոսկանջալուր հաւատեօք: Ես միայն պիտի բանամ այս ջերմապէս նամ հանդէսը քանի մը նամէտ ու երեւեցուցիչ յիշատակներով՝ իր բարքին, սիրտին ու հոգիին վերաբերումով, որ չօշափելի բացարտութեամբ կը ցուցնեն կը հոլանեն ալ իր առաջինի իմաստութիւնը. անձնական ու վկայեալ երեք յիշատակներով միայն, որ լուսացոյց կ'ընեն երեք ճշմարիտ մեծ յատկութիւններ իր վրայ. — Հեզութիւն, կրօնք խորհրդագրած և տրուող հոգեհանգստի մը, որ իր վերջին արտասուքովն և մեր յաւերժ սուգովը կը խորհրդաւորի ի յաւիտեան. —

Երանելի սահմանադրական ազատութենէս ի վեր՝ ժողովուրդին ամէն դասակարգի անհատը դատաւորի կերպարանք առած ամէն խնդիր կը դատէ ու կը դատապարտէ ըստ իր հայեացքին, շահուն, և ըստ թելադրութեան իր ախորժած օրագիրին կամ ինչ և է թերթին, առանց ստոյգ տուիթի դատաստանական ճշմարտախնդրութեանց, առանց համբերութեան ու ճանչնալու զչափ և սահման անձին. ու այս մէկ ծայրէն միւս ծայրայեղութեան վտանգայից թաւում մըն է, որուն միջնաւայրը մալթելու և պատրաստելու է, որպէս զի ամէն անհատ անխտիր գիտցած չգիտցածը դատելու տեղ՝ իր անձը դատել և իր պակասները շտկել լրացունել սորվի նախ, որով ազգին լրութիւնն ալ ինքնին կը շտկուի կը լրանայ՝ ընտրելոց և ձեռնհաս արժանաւորաց՝ թէ ոչ անաչառ պատմութեան թողլով դատել անցեալը, ներկան իր անձնաւորութիւններովն և արդեամբք...:

Այսպէս՝ տեղ մը, կարծեմ օրագիրի մը մէջ կարդացի՝ հանգուցեալ հայրապետին վարուց իրր անաչառ վերջաբան մը՝ թէ «նա միակ թերութիւն մը ունէր, յամառ էր»: Ներուի ինձ այս խիստ յառաջներու-

թիւնս և հետեւորդ բացատրութիւններս .
զի կ'ս ալ քիչ շատ պատմաբան մըն եմ :

Ունէ՛ր թերեւս՝ բացի այդ միակ թե-
րութենէն, իբր աղանդորդի, ուրիշ թերու-
թիւններ ալ . բայց ո՞վ՝ որուն միանգամ
սրբիլ և մեռանիլ պարտ է՝ չունի թերու-
թիւն . և վախճանեալի մը թերութիւնները՝
մանաւանդ մեծ Հայրապետի մը՝ գէթ 50
տարի ետքն եկող պատմագիրի մը հազիւ
կը վայելէ, քանի որ ինք հանգուցեալը չե՛-
նեկայ ի պատասխանատեղ, եւ իր գործերը
չեւ կնիքայ: Ճշմարտութիւնը չի զտուիլ յա-
ճախ քանի մը ամսուան մէջ: Ես աւելի
առաջ երթալով՝ ձեռն ի խղճի կրնամ վը-
կայել թէ Վեհափառը կարծեալին կէսին
չափ ալ յամառ չէր իր կարծեսոյ վրայ,
ինչպէս կ'ըսեն ոմանք . սգիտութեան և
ռամկութեան՝ թէ ոչ կուսակցական ու անձ-
նականութեան յամառութիւն է յամա-
ռութեան վերագրել նախադրապէս . Աս-
տուծոյ պատասխանատու վկայեալ ու սրբ-
բանութեալ անձնաւորութեան մը, որ
երկինքի Ազգն ու Օրէնքն իր սիրտին մէջ,
մեծ Բանին բանն իր բերանն և Ս . Գիրքի
ու ճշմարիտ բարոյականի խիստ հայրենա-
սիրութիւններն իր իմացականին սեւեռա-
կէտ՝ այդ պաշտելի գաղափարականներուն
վրայ ի դէպ եւ ի պէտս ձեւուած սկզբ-
բունքներով՝ իբր առաքեալ լանջապանակ-
ներով՝ կը կանգնի անտեղիտալի, ու կը
մերժէ ամէն ինչ որ չհամաձայնիր անոնց:
Եթէ այս օրինաւորեալ երեւոյթն ալ յա-
մառութիւն համարինք, ապա առաքինու-
թիւն, կրօնք, իմացական ու գիտնական
տուիքներու վրայ հաստատամտութիւնք,
վերջապէս պաշտամունք բարիին կամ ճշ-
մարիտին յամառութիւն են, և իբր այն-
պիսի՝ խոտելի . . . :

Դարերու և կրօններու նուիրագործած
այդ պարզ սկզբանց ընծայեալք և կապ-
եալք՝ մեծ օրէնքին ու հասարակաց բար-
ւոյն պահանջելովն է որ տեղի չեն տար,
կը պնդեն . ոչ թէ իրենց ետովն իրենց կամ-
քովն է որ կուռ կը մնան, այլ հասարակաց
պաշտեալ բարիին ու կամքին, և ամենա-
բարիին յայտնեալ կամքին մեծարանքով:
Թէ այսպէս չմտածենք՝ յամառութիւն պիտի

ըսենք ամէն արիութեան, որ ոյժն է բա-
րութեան ու անոր կիրք-կրօնքը: Յամառն
ան է տիրապէս՝ որ իր կամ իր խմբակին
եւին, կիրքին, սխալ գիտութեան, հան-
գիստին ու շահերուն համար կը պնդէ յա-
ճախ սխալ ևս սկիզբներու վրայ որ չունին
Յայտնութեան ստուերն ու կնիքը, որ՝ ըստ
այնմ՝ չեն տանիր մեծ բարիին ու հասա-
րակաց բարիին . ա՛հ, այսպիսի յամառները
դատապարտել ու հանգուցեալ Հայրապե-
տին աւագ ձայնակցութեամբը դատապար-
տել, պարտք ու բարիք մըն է: Եւ ար-
դարեւ՝ այս կարգի յամառներ, որ յաճախ
մեծագոյն բարիին իսկ ու բանին ժխտողներ
ալ կ'ըլլան՝ դատապարտելու մասին, յետ
քրիստոնեայ լոյն համբերութեան և յոր-
դորներու, հզօր էր նախադրեալին հեղու-
թիւնը սրբանուէր:

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Հոգեւոյս սիրեցեալ Հայրապետն ամենայն Հայոց,
ո՛րքան խորապէս անմոռէր ազգային-եկե-
ղեցական հանրային շահերու, նոյնքան սիրող
էր ու փափաքող հայ Մատենագրութեան
ծաղկման, եւ քաջախիղ ու հայ մտաւորա-
կանութեան, բարձր յատկանիշ մը զոր պահեց
մինչեւ իր վերջին օրերը: Վկայ հետեւեալ
գնահատական գրութիւնը զը իր ցաւալի մա-
հէն հազիւ 40 օր առաջ բարեհաճած էր ուղ-
ղել ներսուն գրագէտ Յ. Գ. Մրմըրեան էֆ.ի. —

ԿԱԹՈՒՂՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

2 Նոյեմբեր 1910

Գերագնիւ

Յարութիւն հգ. Գ. Մրմըրեան

Կ. Պոլիս, Սկիւտար

Գոհունակութեամբ ստացայ Ձեր
Սիրելութեան նոր աշխատասիրած «Պատ-
մութիւն հայ գրականութեան» անուն
գիրքը, և վերլուծելով ուշադիր, ուրա-
խութեամբ տեսայ որ, թէեւ նկատելի աս-
տիճան մը ոչ-քննական, բայց մեր դպրո-

ցական դատադրեանց մէջ, զգալի պակաս մը լեցնելու սահմանուած է այն:

Կը գովեմ Ձեր եռանդն ու ջանասիրութիւնը, որով քաջ կը ճանաչէք ժամանակի յարգը և նախանձախնդիր էք միշտ յօգուտ ի կիր արկանել զայն, Ձեր հմտութեանց ճոխ շտեմարանէն արտադրելով մի զկնի միոյ իմաստասիրական, կենսագրական, բանասիրական, պատմական և այլն երկեր, որոնցմէ իմաստասէրը զինքը հետաքրքրող նիւթեր կը քաղէ, բանասէրը և պատմագէտը նոր աղբիւրներու կը ծանօթանայ, և ուսանողը իր ծանօթութեանց սահմանը կ'ընդլայնէ:

Ապրի'ք երկար և առողջ, ազնիւ հայ գրագէտ, որպէս զի դեռ շատ տարիներ Ձեր գրական վաստակոց արդիւնքները վայելէ մեր ազգային մտաւորական և ուսանող դասակարգը, ինչ որ միեւնոյն ժամանակ Ձեզ ևս պարծանաց առիթ և հոգեկան գոհունակութեան պատճառ պիտի լինի:

Տիրաւանդ ողջունիւ և հայրապետական օրհնութեամբ

Աղօթարար

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿՅԴ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Դեկտ. 19ի Կիրակի իրիկունը Ս. Էջմիածին գումարուած պատգամաւորներու ժողովը որոշած է հիմնել ընդհանուր կրթական դրամագլուխ մը, յանուն և յիշատակ հանգուցեալ Մատթէոս Բ. Կաթողիկոսի, հաւաքուելիք գումարները պահելով Էջմիածնայ Սինօդին մէջ աւանդ, մինչև նոր Կաթողիկոսին գալուստը:

Եգիպտոսի մէջ եւս հոգելոյս Հայրապետին համակրողներ բաժանորդագրական ձեւով հանգանակութեան մը ձեւնարկած են, ի յիշատակ Ս. Կաթողիկոսին որբեր որդեգրելու համար ի մօտոյ շինուելիք Բեւեկեան որբանոց վարժարանին մէջ: Կարճ միջոցի մէջ 1500 շրուշի ելած է գումարը:

ՀԱՌԻՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(ՍՐՁԱԳԱՆԳ ԲԱՐԻՋԷՆ)

Սահմանադրութեան կրկին Թուրքիոյ մէջ վերահաստատուէն և կարգ մը կուսակցականաց Կ. Պոլիս գալէն ի վեր Հայ կրդերականութեան դէմ անիրաւ հալածանք մը սկսած է: Թէ իրենց օւկաններուն մէջ, թէ բեմերու վրայ ճառած միջոցնուն և թէ ընկերային հաւաքոյթներու մէջ ուրիշ նիւթ չունին առաջ քննիք, բայց եթէ Հայ Եկեղեցւոյ պաշտօնեան դատաւիետել, ամբաստանել, զրպարտել և ետեւուն հայոյել: Այս ամենուն դէմ կղերականները մերթ պարկեշտ լռութիւն մը պահեցին և մերթ իրենց պաշտպանողները ունեցան լրագրութեան մէջ: Հեռուէն չէզոք դիտող մը ըլլալով Պոլսահայ կեանքի սա դժբաղդ վիճակին, երբեք գրիչս ձեռք պիտի չառնէի ուէ պաշտպանողական գրիւղ կղերականաց հաշուոյն, բայց զայրոյթ և նողկանք զգացի երբ այս օրուան թղթարերով հասած թերթերու Աղգային բաժինին մէջ կարդացի Երեսփ. Ժողովոյ 19 նոյեմբերի նիստին մէջ Վարդգէս Էֆէնտիի յարձակումը կղերականութեան դէմ:

Գիտեմ թէ այդ կուսակցականները ուրիշ դրամագլուխ չունին, գիտեմ թէ կրդերին դէմ պայքարիլ ուզած միջոցնուն բուն իսկ Հայ Եկեղեցւոյ հիմը քանդել կ'ուզեն: Բայց ա'լ անտանելի դարձան, և զիրենք դիմակազուրկ ընելու ատենը եկած է: Բացայայտ կը տեսնուի թէ մասնաւոր նպատակներու գործիք դարձած են այդ կուսակցականները, և ի նպատակ անձնական շահերու, ի նպատակ իրենց դիրք մը շինելու կ'ուզան անվայել և անպարկեշտ կոխ մը մղել Եկեղեցւոյ պաշտօնէին դէմ:

Ճաւալին այն է որ իրենց այդ արարքովը կուզան հրապարակաւ մատնել իրենց տգիտութիւնը ազգային պատմութեան մէջ, բան մը որ պախարակելի և ծիծաղելի վիճակ մը կը ներկայացնէ իրենց նման ազգին ղեկը ձեռք առնել ուզող փառասէրներուն համար: Եթէ մեր ազգային գոյութիւնը բերբեր քաշքշեր ենք մինչև քսաներորդ

դար, զայն կը պարտինք ոչ թէ կուսակցականներու, այլ հայ կղերին: Շրջապատուած ըլլալով մեզ ձուլելու հակամիտող տարրերէ, մի միայն մեր Եկեղեցւոյ տուած կռնակնիս, աղգային կեանքերնիս պոսներ ենք, և հիմայ ընկերվարական զաղափարներով պիտակուած կարգ մը ծոյլ հացկատակներ ի մի եկած կ'ուզեն հիմէն քանդել մեր գոյութիւնը: Ինչո՞ւ աղքատ խստապահանջ կ'ըլլան կղերականութեան դէմ և մէկ ջուրով կը լուան ամենքը, երբ ցանցառ թերութիւն ունեցողներ գոյութիւն առեր են սքեմաւորներու մէջ:

Ինչո՞ւ անհատական հանգամանքի չեն վերածներ զեղծանողը կամ ծոյլ կղերը: Երբ յեղափոխականաց միթիւն ու թաքուն ծրագրով հրամայուած ոճիրներ կամ ծեծերու խայտառակութիւններ սովոր են չուտ մը անհատական ընթացքի վերագրել, ինչո՞ւ կրօնականի մը արարքը ընդհանրականի պէս կը ներկայացնեն:

Ինչո՞ւ կը մոռնան աղգային դատին համար մարտիրոս եղած, զո՞հ գացող կրօնականները: Ինչո՞ւ արդար չեն դառնուիր, և հայ մատենագրութեան, գրականութեան փառքը կազմող բազմաթիւ կրօնականներու յիշատակը յարգելու տեղ զանոնք ազարտելու կը ճգնին:

Հայը առանց իր Եկեղեցւոյն և կրօնքին չի կրնար ապրիլ, և Եկեղեցին ալ իր պաշտօնէին պէտք ունի: Ընկերային կեանքի ամէն խաւերուն մէջ, ամէն միջավայրի մէջ, քահանան, հովիւր, վարդապետը իրենց դերը ունին: հինէն ի վեր այսպէս կարգադրուած և օրինաւոր դարձած պիտանի կեանք մըն է այս Հայուն համար: Արդեօք բոլոր նշանաւոր օտար գրողներու, բոլոր Հայը ճանչցող, Հայը իր կրօնասիրութիւնը և ինքնութիւնը պահելուն համար գովաբանող նշանաւոր անձերու աչքին՝ Հայը նսեմացնելու, Հայուն համբաւը կոտրելու գելու մէջ ի՞նչ շահ կը փնտռեն կուսակցականները:

Իրենց բռնած կործանարար ընթացքը ոչ մէկ կերպով արդարանալի է: Այնքան տկարամիտ են և այնքան անձնական վէճէրով, փառամոլութեամբ կուրցած, որ չեն

տեսներ թէ Հայուն հետ ապրող միւս աղգերը ո՞րքան ուրախութեամբ կ'ողջունեն հայկական տկարացումը, ո՞րքան անոնց գործին կուգայ մեր երկպստակումը: Լաւ գիտնալով կուսակցականաց ծրագիրը որով աղգութիւն չեն ճանչնար, ընկերվարական են՝ քողորովին կը ծառային մեր թշնամիներուն շահուն, անոնց հացին իւր կը քսեն, և պատճառ կ'ըլլան որ մեզ դէմ աւելի անիրաւութիւններ գործեն: Բայց որո՞ւ դէմ է իրենց յեղափոխութիւնը: Հայուն համար ի՞նչ պէտք կայ անխնայական կամ յեղափոխական ըլլալու: Մեր Եկեղեցւոյ դէմ են, բայց, տխմարներ, արդեօք կա՞յ աշխարհի վրայ մեր Եկեղեցիին չափ ազատամիտ, անկախ, ներողամիտ Եկեղեցի մը:

Մեր կղերի՞ն դէմ, բայց ի՞նչ թիւ կը կազմեն անոնք, ի՞նչ հարստութեան և դիրքի տէր են որ իրենց դէմ կ'ելլաք: Ի՞նչ վնաս հասցուցած են. անոնք աւելի օգտակար, կենսատու եղած են, որքան դուք վնասակար և աւերող էք:

Արդեօք մեր կղերը բաղդատութեան դնելու կ'ելլաք Յրօնասայի կամ Սպանիոյ կղերականութեան, ճիշդ լիթներուն հետ: Արդեօք Եկեղեցին պետութիւնէն բաժնուելուն առթիւն է որ ձեզ կը մղէ այդ անխտհեմ պայքարին: Միթէ կրնա՞նք բաղդատել այդ միլիօններու տիրացած, քաղաքական ահագին ոյժ ունեցող կղերը՝ մեր քանի մը բարեկեցիկ եպիսկոպոսներու և հազիւ կեանքերնին շահող, ապրուող քահանաներուն հետ: Շատ կը սխալիք: Հայ առաջնորդը իրեն վրայ ծանրացած պարտականութիւնը՝ գաւառի մը ժողովուրդը հովուելու, պահպանելու պատասխանատուութիւնը լիուրի կատարելէ վերջ, ի՞նչ նիւթական դիրք կը վայելէ իրականին մէջ: Եթէ առաջնորդներու դէմ կ'ելլաք, անոնց դէմ կը դաւէք, անոնց դէմ կը պայքարիք, բուն իսկ Հայ ժողովուրդին վնասած չէ՞ք ըլլար: Առանց անոր ներկայութեանը միթէ ժողովուրդը կրնա՞յ աղուէն մը ունեցած ըլլալ ցաւերու, աղէտներու և անիրաւութեանց տոնն: Որո՞ւն շահուն ծառայած կ'ըլլաք երբ զայն հալածէք:

Անցնինք ուրիշ խնդրոյ մը: Արդեօք մեր յեղափոխականաց՝ ազգին մէջ բացած պայքարը հայ դրամագլխին դէմ է: Ծիծաղելի ընթացք չիտակը: Քանի՞ հարուստ ունինք: Ո՛ւր է մեր հարստութիւնը: Եթէ ունինք քանի մը ջոջեր, անոնք ալ եթէ չըլլան, վայ եկեր է մեր գլխուն: Որո՞ւ կը դիմենք երբ ազգը ու է պէտք ունենայ: Երբ հանգանակութիւն մը բացուի ո՞վ ամէնէն շատ կ'օգնէ, մեր ընկերվարականները... Եթէ պուրժուաները: Իրենք իսկ միշտ խնկարկող չեն դառնար այդ պուրժուաններուն, երբ իրենց հաշուին թատրոններ, հանդէսներ կուտան: Երբ դրամի համար ոճիրներ գործելու որոշումը կուտան իրենց մէջ, ըսել է որ ուրիշներ այդ դրամը պարկեշտօրէն վաստակելու իրաւունք ունին: Մեր մէջ ո՞ր հարուստը՝ աղքատը, ժողովուրդը շահագործելով դրամի տէր եղեր է որ անոնց դէմ պայքար կը մղեն: Կ'երեւայ թէ հարուստները քանդելով իրենց անկուտի, մակարոյծ վիճակին վերածելուն մէջ հաւասարութիւն կը փնտռեն:

Այս առթիւ սա ալ կ'ուզեմ աւելցնել թէ արդեօք Երեսփ. ժողով գումարուած օրերը եկեղեցւոյ բակը հաւաքուող Հայերը, երեսփոխաններու վրայ յարձակող «ազատական»ները՝ գործ, խանութ, զբաղում չունին: Եթէ իրապէս սահմանադրական են, պէտք է իրենց ընտրելիին ձգեն ազգային խնդիրները լուծել, և պէտք է դահասուն լրագրաց մէջ տեղեկանալով իրերու վիճակին, ու հանդարտօրէն պէտք է գործովսին դրաղին:

Եթէ պաշտօնեայ են ըսել է գործերնուն կը փախին, եթէ խանութպան՝ ըսել է պարկեշտ խանութպաններ չեն որ գործերնին երեսի վրայ ձգած կուգան ազգային անիշխանութիւն մը ստեղծել, կռիւ, ծեծ երեւան բերել: Մի՞ գուցէ կուսակցականները իրենց բոլոր անդամ գրած երիտասարդ ինքնագիտակիցները ծուլութեան վարժեցնեն:

Վարժարանաց մէջ դասերու պարապելու, յառաջդիմելու տեղ քաղաքականութեան սին վէճեր ունենալ, և տղան դեռ գրասեղաններու վրայ իսկ թունաւորել,

անկանոն կեանքի վարժեցնել, ահա, իրենց օգտակարութիւնը: Հեռուէն այս ամէնը դիտելով, տեսնալով անկարելի է չբարկանալ, չցաւիլ: Եթէ ժողովուրդը կ'ուզէ իր արժանի դիրքը, իրեն վայել տեղը ունենալ Օսմ. կայսրութեան մէջ պէտք է ամփոփուի, պէտք է օրինապահ ըլլայ և իրապէս սահմանադրական, այն է իր գործերը, ազգին խնդիրները նայող, քննող երեսփոխանը ընտրել գիտակցօրէն, քայքայ անկէ վերջը այլևս երբէք չխառնուիլ անոր գործունէութեան, և այն ատեն միայն ձայն բարձրացնել երբ իր գոյութիւնը, կեանքը վտանգող արարքներ երեւան կուգան: Ժողովուրդը պարտի ճանշնալ իր թշնամիները, որոնք իր անուամբ Վասակի դեր առած են ու աղգը անդունդը կը տանին քայլ առ քայլ: Ժողովուրդը պէտք է գիտնայ թէ իր շահուն ծառայելու պիտակին տակ ոճիրներ գործող, անօրինապահ գտնուող այդ հերոսները՝ ոչ թէ ճակտի քրտինքով, արհեստով պարկեշտօրէն աշխատելով կեանքերնին շահող անձեր են, այլ տեսակ մը հացկատակներ որոնց շահը կը կայանայ ծրագիրներու փայլուն շողշողումով աչքեր չլացնել, իրենց գիրք մը ստեղծել և ծուլօրէն ապրիլ:

Փրանսայի պէս ընկերվարականութիւնը յառաջ գացած երկիր մը ընաւ չի պարունակիր մեր յեղափոխականի տեսակը:

Անգործ անձեր որոնց արհեստն է միայն կուսակցական ըլլալ, արդեօք վստահութիւն կը ներշնչեն քեզ, ով ընթերցող, այս անձերը, կրնան անոնց վստահիլ ազգիդ շահերն ու ինչքը: Կրնամ ապահովցնել քեզ որ եթէ ազգային Վարչութիւնը իրենց ձեռքը անցնի, այլ ևս ոչ մէկ Հայ իր նիւթական աջակցութիւնը պիտի բերէ ազգային վէրքերուն: Որովհետեւ ատենք այն պիտի անձեր են որ թէեւ ուրիշին համար խստապահանջ, սակայն իրենք երբէք սովորութիւն չունին հաշիւ տալու: Ալ դուն մտածէ մնացածը:

Բարիք

ՀԱՅԿԱՍԷՐ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՊԱՐՄԱՆԻ ՄԸ

ՅԻՇԱՍԱԿԻՆ

Ու երբ կը մարէին վերջալոյսին շէկ լոյսերն երկնքի անհուն ալքերուն մէջ քու ձիւնասպիտակ հոգեակդ, անհունին խորհուրդովն ակաղձուն, իր հուսկ հառաչն արձակեց. մութը կը տարածուէր վերը գիշերին խորհուրդներովը լի. սեւ կը տարածուէր վարը, ննջախորշիդ մաքուր սպիտակութեանը մէջ. սուգը կը ծնանէր հոն ուր կեանքը պիտի փթթէր իր բոլոր շողուն լուսութեանը մէջ:

Եւ ինչո՞ւ արդեօք գիշերին վաղորդայնը կը համար արագ արագ աւօտներու լուսածաղիկ փթթումով, և կեանքի վաղորդայնը կը յամենայ՝ անթափանց վարագուրին ետին յուսահատեցուցիչ յաւիտենականութեան մը:

Ինչո՞ւ կը վերնծիւղի բնութիւնը՝ ձիւնեղէն խաւերու, արհաւիրաց ձմեռներու սարսափներէն յետոյ, հողը հսկայ բեղմնաւորումով կը վերարտադրէ, մինչ վաղաթարշամ կեանքերն իրենց հոգեղէն վերագարթումին՝ անսաման ժամանակն ունին յաւիտենականութեան:

Որոհուող, արդարեւ խորհուրդ մը անտարակուսելի, որուն ահաւոր գիտակցութիւնը կ'ունենան հոգիները վերջին պահուն, այն պահուն յորում կեանքի կապերը կը բեկանին, երկիրը խոյս կուտայ յետկոյս, անհունին խորհուրդը կը հոլանի իր վսեմ մերկութեան մէջ, ու այդ պահէր անշուշտ, ո՛վ սպիտակ հոգի, երբ վերջին անգամ Ս. Գիրքը խնդրեցիր, քու մաքրափայլ կոյս համբոյրովդ վերջին գգուանքը տուիր անոր. քա՛նի վսեմ էր հաւատքիդ մաքրութեամբը օծուն այդ համբոյրը և քա՛նի մորմոքիդ ծնողիդ համար, իբր խորհրդանիշ անցաւոր կեանքիդ գիտակցութեան: Ու դժուակ էր պահը, ո՛վ երանեակ հոգի, հէք փոքրիկ սիրտդ իր սէրի կապերն ունէր, ծիածանի գոյներով կը շողար կեանքը հորիզոնիդ վերեւ, ապագան աղուոր գարուն մը կը

խոստանար իր բոլոր սէրերով, իր ամառայնի տաք, երկար հրճուանքներով, հոգիդ կը թրթռար դաշնակութեամբ, կեանքը կը գօտեմարտէր մէջդ, յոյսը դեռ կ'երգէր էութեանդ ալքերուն մէջ, ու ջութակիդ լարերուն թրթռուն ձայնանիշերը կ'ըլլային քու հուսկ-բանքդ, իբր ուզէիր, վերջին անգամ, մատաղատի մանկութիւնդ երգել:

Մանուկ հոգիիդ համար չատ կանուխ էր այդ վախճանը և զարհուրելի այդ մեծ խորհուրդը որ կը հոլանէր: Եւ ահա լուսաշող հոգիներ, մանուկ զուարթուններ, հրեշտակներ իրենց խանդակաթ գգուանքներով շրջապատեցին մաքրափայլ հոգիդ՝ երկրաւոր գաւառներու նոր զուարթուն, նոճեհ հոգի, առաջնորդելու համար քեզ Մեծ Յաւիտենականին փառայեղ գողտնեացը ծոցը:

Հիմա դուն մին ես անշուշտ այն լուսածաղիկ զուարթուններէն որոնք կը շողան, ճառագայթի մը մէջէն կը ժպտին, սփոփարար շող մը, յոյս մը կը կաթեցնեն յուսահատ մարդկութեան սեւացած, արցունքներէն լլկուած հոգիներուն խորը:

Նղար ուրեմն դու լուսափայլ հոգի մը, ոգին հաւատքի, քանի որ հաւատքով բախեցիր դուն երկնքին՝ հրաժեշտի գերագոյն պահուդ, ու հիմա օծուն հաւատքովդ մաքրափայլ սիրովդ սփոփարար ոգիի մը միմունջով աղօթէ ծնողիդ համար որ կը մորմոքի բացակայ հրեշտակիդ լուռ և տխուր գերեզմանին քովիկը. ըսէ՛ իրենց թէ մաքրափայլ հոգիները չեն մեռնիր, այլ կ'ապրին իրենց մահուանէն վերջն ալ. ըսէ՛ թէ անդրշիրմի կեանքը կը ծիծաղի աշխարհի ունայն փառքերուն վրայ, թէ Աշխարհս ժամանակաւոր կայք մըն է, մանրերկրորդի մը տեւողութիւնը սոսկ, որուն համար չարժեք մորմոքի և կոճեղ:

Հ. ԱՐԱՊԵՍԱՆ(*)

(*) Տիկին Հռիփսիմէ Արապեան վաղածանօթ գրագիտուհի մ'է, յուրջ միթոյ մը եւ հմուտ գրչով մը օժտուած, որուն վաղաւեռիկ պատանի մը՝ ողբացեալ Արամ Մուրաթեանի յիշատակն նուիրած այս փափուկ գրութիւնը ծիւղ եւ ցաւակից զգացումով մը կը հրատարակենք: Այսինով ենք միեւնոյն ասեմ որ ազնիւ գրագիտուհին «Ճանապարհ» սիւնակները պիտի զարդարէ մեր ընդ մեր իր շնորհալի աշխատակցութեամբ: Ծ. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ

Ս. Պատրիարք Հօր հրաժարեալ հանգամանքին հետեւանօք, Ս. Ծննդեան առաւօտուն Մայր Եկեղեցւոյ մէջ պատարագեց և Զօրհնէքի արարողութիւնը կատարեց փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեան: Նոյն օրը Ֆրանս. դեսպանին կողմէ Պատրիարքարան շնորհաւորական այցելութեան եկաւ, դեսպանատան թարգմաններէն Պ. Ֆիլիք Տօզօն, որ շատ գովեստով խօսեցաւ Հայոց վրայ, չեչտելով մասնաւորապէս անոնց կարեւոր դերը Թուրքիոյ տնտեսական զարգացման մէջ, անոնց ջանքերը Անատոլիոյ առեւտրական կեանքին բարգաւաճման համար, և Պարսկաստանի մէջ անոնց յառաջագէտ վիճակը: Պ. Տօզօն հիացումով խօսեցաւ նոյնիսկ Բարիլի մէջ սակաւաթիւ հայ վաճառականներուն ձեռք ձգած յառաջդիմութեան վրայ, ներքողեց բարիզաբնակ Տիգրան խան Բէլէկեանի գործունէութիւնը, և եզրակացուց թէ Հայերը Թուրքիոյ մէջ կարեւոր դեր մը կատարելու կոչուած են իրենց ընդունակութեամբ և ուշիմութեամբ: Ռուս դեսպանատան թարգման Մովսէսն էֆ. եւս շնորհաւորական այցելութեան գալով Պատրիարքարան, ի բացակայութեան դեսպանին գործակատարին այցիտմար բերաւ և շնորհաւորեց:

* * Հայ եւ Յոյն մերձեցման վրայ կարծիքներու նոր փոխանակութեան առիթ եղաւ Ս. Ծննդեան տօնը: Մայր Եկեղեցւոյ մէջ Զօրհնէքի արարողութեան ներկայ գտնուեցաւ Շապին Գարահիսարի մետրապօլիտ Տ. Բօլիքարբ, հայագէտ Տ. Եօաքիմ սարկաւազի հետ, որոնք ի վերջոյ Պատրիարքարան ելնելով շնորհաւորեցին Ս. Ծննդեան տօնը, մաղթելով որ Բրիտանոսով մէկ ըլլան բոլոր Եկեղեցիները: Փոխանորդ Հայր Սուրբը պատասխանեց թէ զաւանսքանական խնդիրներ գուցէ փափաքուած միութեան արգելք ըլլան քան թէ օգնեն. ուստի պէտք է մէկդի դրուին

անոնք հիմա, և բաւականացուի փոխադարձ եղբայրական սիրով, որպէս զի Պատրիարքարաններու ընթացքը ազդէ նաեւ ժողովրդեան վրայ, և Հայեր ու Յոյներ համերաշխ ապրին: Մէկ խօսքով փոխանորդ Հայր Սուրբին եզրակացութիւնն էր թէ եկեղց. միութիւն յառաջ բերելու համար խնդիր յուզել անժամանակ է, ինչ որ Տ. Բօլիքարբ ալ ընդունեց, աւելցրնելով որ ինք ժամանակաւ յողուածներ գրած է երկու Եկեղեցիներու մասին, և ցոյց տուած է թէ Հայ և Յոյն Եկեղեցիները մեծ տարբերութիւն չունին:

Այս տեսակցութենէն քիչ յետոյ պաշտօնապէս շնորհաւորութեան եկաւ Յունաց Պատր. փոխանորդը՝ գործակատարին հետ, և յայտնեց Տ. Եօաքիմ Պատրիարքին ուրախութիւնը՝ երկու Պատրիարքարաններու չեչտուած սիրալիր եղբայրութեան համար, աւելցնելով որ Պատր. առանձնաշնորհմանց հետ կապ ունեցող խնդրոց մէջ միեւնոյն ձեւով եղած խնդրանքներ թէ կառավարութեան գործը կը զիւրացնեն և թէ արդիւնք յառաջ կը բերեն: Դուրեան Հայր Սուրբ Յունաց փոխանորդին ալ խօսեցաւ առաւօտուն եկած պատգամաւորութեանց խօսած եղանակով:

Մէկ երկու ժամ ետքը Յոյն երեսփոխաններու կողմէ Պատրիարքարան շնորհաւորութեան եկաւ Խօնէոս Էֆէնտի, որ իբրեւ երեսփոխան խօսեցաւ. եկեղեցականներուն ոճով, աւելցնելով նաեւ որ իրենք Բրիտանոսեայ ազգերու մէջ գործելու և ուղղութեան մերձեցում յառաջ բերել ուզելով, նպատակ ունին ամէն բանէ առաջ զիւրացնելու կառավարութեան գործը, որ Բրիտանոսեայ ժողովրդոց պառակտեալ վիճակէն դժուարութեան մատնուած է և իրաւամբ կը գանգատի: «Մեր նպատակն է Թուրքիոյ խաղաղութիւնն և յառաջդիմութիւնն ապահովել, անոր մէջ բնակող ժողովրդոց ազգային, եկեղեցական եւ կրթական առանձնաշնորհումները պաշտպանելով. և այս տեսակետով է որ Պատրիարքարանները պիտի գործակցին՝ ներկայացնելու կառավարութեան իրենց խնդիրները» Փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ.

պատասխանեց թէ յանուն Յոյն երեսփոխանաց տրուած այս այցելութիւնը մասնաւոր շնորհակալութեան առիթ է ազգին համար. թէ և ինք այս խնդրոյն վրայ կարծիք յառնելու ունէ իրաւունք չունի, որովհետեւ Պատրիարքն հրաժարեալ է և ժողովներն ալ չկան, սակայն գիտէ որ պաշտօնական մարմիններ Յունաց Պատրիարքարանի ներկայացուցած առանձնաշնորհմանց խնդիրներուն համամիտ են, և իրենք ալ միեւնոյն կերպով կատարած են իրենց զիմուսները, որոնք օգտակար պիտի ըլլան անտարակոյս:

* * Պուլկարաց նորընտիր փոխանորդն ալ գործակատարին հետ Ծննդեան առաջին օրը շնորհաւորական այցելութեան եկու Պատրիարքարան, և հոգեւոր պետերուն այս գործակցութեան նպատակին համար նպաստաւոր կարծիք և պատրաստակամութիւն յայտնեց:

* * Հայ-հռոմէականաց Պատրիարքարանի պատգամաւորութիւնը միայն այս տարի չգտնուեցաւ այցելուներու շարքին մէջ, որովհետեւ Հայ-հռոմէականաց Ս. Ծննդեան առթիւ մեր Փոխանորդը չէր այցելած անոց Պատրիարքարանը, համամտութեամբ եկեղեցական և աշխարհական ժողովականներու, որոնք այս պաշտօնական ձեւակերպութիւնը զանց ընելու պէտք տեսած էին, քանի որ Թէրզեան Պատրիարք մասնաւոր նկատումներով պէտք տեսած էր Ազգ. Պատրիարքարանի հետ յարաբերութիւնները վերջացնելու, անպատշաճ բառեր գործածելով Հայ եկեղեցւոյ մասին, իրենց Ընդհանուր Ժողովին մէջ: Թէրզեան Պատրիարքի այս ընթացքը աւելի ուշադրաւ և ցաւառիթ կը դառնայ, երբ կը լսուի թէ Զմիւռնիոյ մէջ Իզմիրլեան հոգեւոյս Հայրապետին հոգեհանգստեան պաշտամունքին ներկայ գտնուած են Լատին կրօնաւորներ՝ Պապական նուիրակին կողմէ յատկապէս զրկուած, նոյնպէս Զմիւռնիոյ Հայ-հռոմէականաց Առաջնորդը և Վիէնական Մեծաւորը: Մամսոնէ ալ կը գրեն թէ տեղւոյն Հայ-հռոմէականաց առաջնորդ Հ. Քաջունի եւս ոչ միայն ներկայ գտնուած է, այլև հանդէսէն մէկ

քանի օր առաջ առաջնորդարան երթալով՝ զրկուելիք հրաւիրագիրներու պատրաստութեան հսկած է: Դռնացուցիչ է սակայն որ Հայ-հռոմէականաց Պատրիարքին և կղերին այս ընթացքին, համամիտ չէ ժողովուրդը: Հայ-հռոմէականաց Ընդհանուր Ժողովոյ անցեալ ուրբաթ օրուան նիստին մէջ 25 անդամոց ստորագրութեամբ գիրք մը ներկայացուցած է թէ՛ Թէրզեան Պատրիարք ինչո՞ւ զլացած է պատգամաւորութիւն մը զրկել Իզմիրլեան Հայրիկին հոգեհանգստեան պաշտամունքին օրը: Այս հարցումը Ժողովին յառաջիկայ նիստին օրակարգին անցած է, և շահեկան պիտի ըլլար լսել տրուելիք պատասխանը:

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅ-ՀՌՈՄԷԱՆԱՅ. — Հալէպի առաջնորդութեան Թեմերէն Պէյլանի մէջ 110 անձեր որոնք բռնապետական ուժերով հալածանքներուն պատճառաւ հռոմէականութիւն ընդունած էին, այս անգամ ամբողջութեամբ իրենց մայրենի եկեղեցւոյ գիրկը դարձած են: Պէյլանէ ժամ մը հեռու Աթըզ գիւղի կէսը, այսինքն 12 տուն, որոնք հռոմէադաւան էին, ասոնք ևս Հայ եկեղեցին դարձած են: Հալէպի առաջնորդ Տ. Շահէ Ծ. Վ. օրհնութեան գրով քաջալերած է նորադարձները, խոստանալով նիւթական և բարոյական ամէն աջակցութեան:

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ տարեկան հանգանակութեան առթիւ Անատոլիոյ երկաթուղեաց ընկերութիւնը նուիրած է 250 ոսկի, Օսմ. Պանքան 165 ոսկի, Բումէլիի երկաթուղեաց ընկերութիւնը 100, Թրամուէյի ընկերութիւնը 100 ոսկի, շնորհիւ Վսեմ. Պետրոս էֆ. Հալաճեանի, որ նախագահն է այս տարուան պարահանդէսի Կարգադիր Մասնախումբին: Գոհութեամբ կ'իմանանք որ նոյն ընկերութեան անօրէն խորհրդոյ անդամ Բրօֆ. Յովհաննէս էֆ. Յակոբեան որ Եգիպտոս գացած էր, Աղեքսանդրիոյ մէջ յաջողեր է՝ մասնաւորապէս Լեւոն էֆ. Մկրտիչեանի և Բրօֆ. Գաեանի աջակցութեամբ կազմել Միացեալ ընկերութեան մասնաճիւղ մը, նախագահութեամբ Վսեմ. Աբրահամ փոշա Բարթողի որ տարեկան 100 Անգլ. ոսկի նուիրատու-

ութիւն մը կ'ընէ իր անձնականէն: Կամ սարական եղբարք ևս 50 ոսկի նուիրած են՝ ստանալով պատուոյ անդամակցութեան իրաւունք: Բրոֆ. Յակոբեան Գահիրէ գացած է, ուր կը յուսացուի թէ պիտի գտնէ նոյն տաք ընդունելութիւնը:

Ա.ԶԳ. ԺՈՂՈՎԸ երէկուան համար (Ուրբաթ) դռնփակ նիստի հրաւիրուած էր: Այս սողերը գրելու պահուն արդիւնքը յայտնի չէր: Դիտելի է սակայն որ Ս. Պատրիարքը չէր ուզած ստորագրել հրաւիրագիրները, անշուշտ իր հրաժարականը Բարձրագոյն Դրան մատուցած ըլլալուն պատճառով, և անոր փոխարէն ստորագրած է Ժողովի ատենապետ Մ. Ազարեան էֆէնտի: Ամէն հաւանականութիւն կայ որ տեարք երեսփոխանք խղճամիտ պարտաճանաչութեամբ մը փութացած ըլլան ներկայ գտնուելու Ժողովին, և մենք ուրախութիւնը կ'ունենանք յառաջիկայ թիւով ծանուցանելու երկու ամիսէ ի վեր տեւող ազգային անխիտանական և անկիրպարան վիճակին վերջ գտած ըլլալը:

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԷՐ ՄԸ. — Մուկուայի մէջ վերջերս վախճանած հանգուցեալ Աթմաս Ժամհարեանց 250,000 ռուբլի կտակ մը թողուցած է, գիւղատնտեսական բարձրագոյն դպրոց բանալու համար: Թիֆլիզի թերթերը նշանակալից երեւոյթ մը կը նկատեն այս մեծագումար կտակը, որ թողուած է գիւղական ցարդ անտեսուած տարրին նիւթական և բարոյական վարժացման համար:

ՄԱՀ ՄՐ. ՇԷՐՊԸՐԴ Մ. ԱԼԷՆԻ

Խորին ցաւով կը ծանուցանենք մահը Աւեսաբերի պատուական խմբագրապետ ՄՐ. Շ. Մ. ԱԼԷՆԻ, ծանօթ իր ջերմ համակրութեամբ Հայ Եկեղեցիին և Հայ ազգին վրայ: Ամերիկեան միսիոնարութեան մէջ հանգուցեալն այն սակաւաթիւ դէմքերէն էր, որ խոր յարգանք ունին Հայ. Ս. Եկեղեցիին, որուն ինք իր մէջ բարեկարգութեան փափաքող էր, և առանց պայքարելու անոր դէմ՝ ամերիկեան սուլարները

չահագործելու համար: Աւեսաբերը իր խմբագրութեան յանձնուելէն, ատկէ երեք տարիէ ի վեր ստացաւ բոլորովին նոր ոգի և նպատակայարմար ուղղութիւն, ողջամիտ և միսիոնարներու համար բոլորովին նոր գաղափարներով: Ատանայի եղեռնէն ետքը, սիրով անդամակցեցաւ Որբախնամին, մինչև կեանքին վերջը խղճամորէն աշխատելով այս գործին Կիլիկիոյ աղէտէն խորապէս զգածուած, գրքով մը հրատարակեց՝ նկարագրելով գործուած բարբարոսութիւնները, և հռչակելով Հայոց անմոռութիւնը: Այժմ պատրաստելու վրայ էր Հայկական Եկեղեցի անունով Անգլ. գիրք մը, հաստատելու համար թէ Հայ Եկեղեցին ճշմարտապէս քրիստոնէական սկզբունքներով՝ ժողովրդական կենսական Եկեղեցի մըն է, արժանի խորունկ համակրութեան:

1865ին ծնած Խարբերդի մէջ միսիոնար ծնողքէ, իր մանկութիւնն անցուց այդ հայաշատ կեդրոնին մէջ, իւրացնելով Հայուն լեզուն և Հայուն յօքը: Ի վերջոյ Ամերիկայի մէջ ստանալով երկրորդական և համալսարանական կրթութիւն, կը դառնայ Խարբերդ, ուր կը գործէ իրրեւ միսիոնար, և ինը տարուոյ մէջ կը պտտի գրեթէ ամբողջ Փոքր Ասիան, իր գործունէութեան գլխաւոր կեդրոնն ըլլալով ի վերջոյ Վան և Վասպուրականի նահանգը: 1902ին Ամերիկա երթալով Պոսդընի մէջ հիմնեց ցարդ հրատարակուող Կոչնակ շաբաթաթերթը, զոր երեք տարի վարելէ ետքը, Թուրքիա դարձաւ, և երկու տարի չափ տնօրէն եղաւ Պարտիզակի Բարձր. Վարժարանին: 1907 յուլիսին ստանձնեց Աւեսաբերի խմբագրապետութիւնը, զոր կը վարէր ցարդ:

Իր մահը կարեւոր կորուստ մըն է հայ ազգին համար:

Տաճար, խորապէս զգածուած այս դառն կորուստէն: Իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ այս տխուր առթիւ:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԲԷՆՅ. ԷԲՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՐԳԻՐ

ԶԱՐԲԱՅԵՐ ԲԷՆՅ. ԿԷԶԻՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ՄԵԶՈՒՄԱՆ

Զաւմահըլար, Յակոբեան խան

“ՏԱՃԱՐ,,Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց' տարեկան	40 դրուց
Արսասանմանի համար տարեկան	10 Ֆրանք
Ռուսիա	4 ռուպլի
Ամերիկա	2 օլար
Ձեռք կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆԻՆ՝ ԴԻԻՐԱՄՍՏՋԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփրաւ, Հայոց եկեղեցի

دوسعادته بشکهاشده ارمنى کلیسائنده (داجار) غزتیسی مدیری پاپاس زارما

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

“ Հ Ո Ր Ի Զ Ո Ն , ”

Գրական, հասարակական եւ ֆադաֆական Օրաթերք

Կը հրատարակուի մշտական աշխատակցութեամբ Ղազարոս Աղայեանի, Յովհ. Թումանեանի, Լէօի, Շիրվանզատէի եւ ուսանայ ու թրքահայ լաւագոյն գրողներու : Հորիզոն իր հիմնարկութեան առաջին երկու տարիներուն նշանակելի տեղ մը գրաւած է արդէն կովկասահայ լրագրութեան մէջ, եւ երրորդ տարին թեւակոխած է լաւագոյն ուժերով օժտուած : Տարեկան բաժնեգին թուրքիոյ համար՝ 120 ղրշ . վեցամսեայ 70 ղրշ . : Եւրոպա տարեկան 30 ֆր . վեցամսեայ 18 ֆր . : Հասցէ՝ Rédaction «Horizon», TIFLIS, (Russie, Caucase) :

Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Մ Գ Ի Ր Ք Ե Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Օ. ԱՐԶՈՒՄԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԿԱՎՈՒՅԻՆ ՏԱՐԵՅՈՅՑԸ, Բ. տարի, 1911. — Մաքուր եւ ճաշակաւոր տպագրութիւն : Գին 5 ղրշ . :

ՌԱՌԻԼ ԲՕՆՇՕՆԻ ՈՏԱՆԱԻՈՐ ԿԱՂԱՆԴՋԷՔՆԵՐԸ ՍՄԷՆՈՒՆ. — Գին 3 ղրշ . :

ՀՏԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

« Շ Ա Ն Ք » Տ Պ Ա Ր Ա Ն Ի

ԵՐՈՒԱՆԴ ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ, Կեանքին վեջ. — Ապրուած կեանքի յուզիչ նորաժէպերու շարք մը՝ հատորի մը մէջ ամփոփուած : Գին 4 ղրշ . :

ՄԵՐ ՏԱՐԵՅՈՅՑԸ, Բ. տարի. — Ուշագրաւ հաւաքածոյ մը, վիպական, բանաստեղծական, պատմական եւ երգիծական գրութիւններու, ևն . , ծանօթ գրողներու կողմէ ստորագրուած : Գին 5 ղրշ . :

ԿԱՊՈՒՏԻԿԸ. — Ֆրանսացի սրամիտ գրագիտուհի Ժիբի շահեկան մէկ վիպակը՝ թարգմանուած Տիկին Ագապի Ժ. Սայէպալեանէ : Գին 3 ղրշ . :

ՆԵՐԱՇԽԱՐՀ, ԲՈՑԵՐ ԵՒ ԸՆԿ. (LTD.), անուանի ընկերութիւն հիմնուած 1906ին. — Երգիծական տեսարակ մը Փայլակէ : Գին 20 փարա .

ՀՍԿՈՒՄԸ, տուամ մէկ արարուածով. — Գրեց Մերուժան Պարսամեան. Ֆրանսուա Բօքէի համանուն գործէն քաղելով : Գին 1, 25 ղրշ . :

ՊԵՐՃՈՒՀԻ ԵՍԶԸՃԵԱՆ, Հոգիի երանգներ. — Հաւաքածոյ մը գողարիկ բանաստեղծութեանց : Գին 1 ղրշ . :

«ՍՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅՑԸ»

Թեոդիլի գրական, տեղեկագրական ևն. ճոխ հաւաքածոն, որ սպառելու մօտ է, կը ծախուի ի գին 12 ղրշ . :

